

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕԻԵԼ, ՅԱՆՁՆԱԺՈՂՈՂԻ ՇՈՒՐՋԸ

Երէկ յայտնեցինք, որ տիկ. Սօֆիա Դանիէլ-բէկ նոյնպէս պէտք է հրաժարական ստայ:

Յարգելի տիկինը, վերադառնալով Քութայիսից, ամսիս 26-ին ուղարկել է Մեսրոպ եպիսկոպոսին հետեւալ գրութիւնը.

«Ձերդ սրբազնութիւն.

«Շնորհակալութիւն յայտնելով բոլորին, որոնք պատուել են ինձ ապրիլի 22-ին յօբելեանական յանձնաժողովի անդամ ընտրելով, ես հնարաւոր չեմ համարում մնալ այդ յանձնաժողովի կազմի մէջ, նոյն հիմունքներով, որոնք ստիպեցին յանձնաժողովի միւս 4 անդամներին հրաժարվել անդամակցութիւնից:

«Թիֆլիսից բացակայ լինելով, ես չը կարողացայ աւելի վաղ ներկայացնել ձեր սրբազնութեանն իմ հրաժարականը:

«Սօֆիա Դանիէլ-բէկ»